Ա. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1898 — ԹԻՒ 80

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Գուշկարիոյ համար
Տարեկան 10 ֆր.
Վեցամսեայ
Արտասահմանի համար տարեկան 12
Վեցամսեայ
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՔ

—)(—

Գրութիւնք ետ չեն տրուիր

—)(—

Յանձնուելիք տողը 20 սանթիմ է. երեքին առ ի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայ։

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

ԽՄԲԱԳԻՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Պ. Ֆ. ՍՈՒՓԻԱՍԵԱՆ

Նամակ եւ դրամ ղրկել
եւ ոգիներեանց հասցէին

—

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

—

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

R. P. Kalémkarian
(Autriche)
Mechitharistengasse W. 4
Vienne

ԴԱՆՈՒԲԷՆ ԱՆԴԻՆ

—)·(—

Բ.

Անցեալ անգամ բացատրած էինք թէ Ռումանիոյ մեր պանդուխտ եղբայրներուն մէկ մասին վարած կեանքը ոչ թէ միայն վիրենք իրենց մարդ՝ բարոյական անանխանձելի ատիճանի մը կիջեցնէ, այլ և ազգայնութեան տեսակէտով ալ շատ վնասակար է, քանի որ ամենավատ տպաւորութիւնը կրնայ թողուլ տեղացի հայերուն վրայ, զորս, ազգի և հայրենիքի սիրոյն վառելու միջոցը, ի հարկէ անոնց աչքերուն առջեւ նուաստացուցիչ և անպատուաբեր տեսարաններու շարք մը պարզելը չէ։

Ի՞նչ լաւ կըլլայ ուրեմն եթէ մեր հայաստանցիները, ինչ միջավայրի մէջ ալ ապրին, որքան ալ փորձող, հրապուրող ազդակներէ չըլլատպատուած ըլլան, միշտ հայաստանցի մնան, վոխանակ աղաւութեան սկզբունքը սիրալ ըմբռնող կեղծ—եւրոպացիներ դառնալու։

Զմրան այս եղանակին մէջ, երբ առեւտրական զեռուն կեանքը կը դադրի և բաղմաթիւ աշխատաւորներ անգործ կը թողու, այդ անզբաղ և մոլորեցնող դրութեան մէջ, ի՞նչ ընելու, ժամանակը ի՞նչպէս անցնելու ծրագրած է մեր ռումանաբնակ հայաստանցի պանդուխտը։

Մեր պարապոյ ժամերը օգտակարապէս գործածելու կերպին տգիտութիւնը, ի հարկէ, մեծագոյն չարիքներէն մէկն է որմէ հայը կը տառապի։ Ուրիշ ազգեր ձմրան երկար գիշերներէն և պարապոյ ամէն մէկ վայրկեանէն անհուն օգուտներ քաղած են, զանոնք գործածելով օգտակար ծանօթութիւններու պաշար մը ժողվելու՝ իրենց մտքին կազդուրման և հոգիին զարգացման համար։

Մենք, եթէ պտոյտի ելլենք այն վայրերը ուր խմբուած են մերինները, հարիւրն իններսուն տխուր և գռեհիկ տեսարաններու պիտի պստահինք։ Պիտի տեսնենք, օրինակի համար, մզլոտած սրճարան մը, որուն մութ խեղճ և զգիր շողիներուն մէջ ընկղմած, դատարկ խօսակցութիւններու անձնատուր, նարտի և կամ թղթախաղի մուրոտ և ճենճոտ հեղանի մը շուրջ բոլորած՝ մեր հայաստանցիները, սրտի տրոփիւնով և անհուն շահեկանութեամբ կը դիտեն խաղի ելք մը. սին, երեխայական սպասումով մը, որուն ո՛չ թէ ամբողջ ձմրան մը կեանքը, այլ նոյն իսկ կեանքի րոպէ մը յատկացնել չարժեր։

Հայաստանի զաւակի մը համար անարժան բաներ են սոնք։ Մեզ համար լուրջ և խոհուն բլլալ կը վայլէ. ներելի չեն մեզ այն ժամանցները, որոնք եթէ ուրիշ ազգերու մէջ թերութիւններ համարուին, մեզ համար ծանր յանցանքներ են։ Պանդուխտի այդ կեանքի մէջ զոր կը վարէք, միայն մէ՞կ բան կայ որ կրնայ մխիթարել ձեզ. բան մը՝ որ անտեսանելի այլ անձնուէր բարեկամի մը պէս պիտի պաշտպանէ ձեզ ամէն կարգի մոլորումներու դէմ. բան մը՝ որ ձեր հոգիներու թեւեր պիտի տայ, պիտի բարձրացնէ ձեզի. և դուք՝ այդ բարձունքէն տեսնելի յստակ պիտի տեսնէք թէ ինչ պարտիք ընել իբր հայ, և մանաւանդ իբր հայաստանցի։

Ընթերցումն է այդ բանը։

Ո՞ր խմբագիրը, ո՞ր հրատարակիչն է որ չպիտի մատակարարէ ձեզ թերթ և դիրք։ Միայն փավաղը թող չպակսի ձեր քով՝ հետզհետէ յարատեւող ընթերցասէրներ դառնալու։ Եւ այն ատեն զարմանալով պիտի տեսնէք թէ ձեր երբեմնի զասրկ խօսակցութիւնները չդատ և հիւթեղ պիտի դառնան, ձեր անձնական արժէքը պիտի տասնապատկուի և նոյն իսկ նիւթական աշխարհի մէջ, շահու այնպիսի նոր և պարկեշտ աղբիւրներ պիտի գտնէք, որոնց գոյութեան վրայ ձեր հիմակուան՝ տգիտութեամբ կուրացած աչքերը զաղափար անգամ չունին։ Ձեզի ալ աղէկ պիտի ըլլայ, աղգին ալ, հայրենիքին ալ, և մանաւանդ հայրենիքի մէջ ձեր երեսի վրայ թողած սիրելիներուն։ Այն ատեն, լսիրշ ռումանուհիի մը մահացու ցանցերուն մէջ չպիտի իյնաք. եթէ ամուրի էք, միշտ պիտի խորհիք Հայաստանի տարաբախտ կոյսին՝ զոր քրդերուն քմահաճոյքին յանձնելով, դա տապարտելի անձնասիրութեամբ մը մոյն ձեր գլուխները ազատելու մտածած էք. մե՞զ ձեր կարիճութեանը։ Իսկ եթէ արդէն աշխարհ մտած էք և զաւակներ ունիք, ճիւաղ հայր և այլասերած ամուսին դառնալու տեղ, ձեր սիրոն ու հոգին անբաժան պիտի ընէք միշտ հայրենի մարած օճախէն, որուն նոր կայծեր և կենդանութիւն տալու միջոցներուն վրայ պիտի խորհիք։

ՊԱՄԲՐ-ԱՐՇԱՒԻՐ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Թաւրիզ, 25 Հոկտ.

Ինը հայերի գլխատուած Սալմաստում

—

Տաճկաստանից հալածված 10 կարիճ Մոկացի եւ Շատախեցի հայեր Պարսկաստան մտնելով Սալմասի Մահալամ հայ գիւղը մապատան են փնտռում. հայերը ապաստան չեն տալիս. եւ խեղճերը ստիպված թափառվում են գիւղ այգիներում։ Գիւղացիք դարձեալ ստիպում են նրանց հեռանալ Սալմասից։ Նրանք երկու օր միջոց են խնդրում, ճանապարհի յոգնութիւնից կազդուրվելու համար, մանաւանդ որ իրանցից երեքը հիւանդ են լինում։

Գիւղացիք սրտերը քարացրած՝ պնդում են իրանց անիրաւ եւ ամարդի պահանջի վրա եւ գնում մատնում են տեղական կառավարութեան։

Կառավարութիւնը հարիւրաւոր ձիաւոր զինուորներով եւ քուրդ ձիաւորներով խեղճերին պաշարում է։ Հայերը յայտարարում են, որ իրանք զոր չունեն պարսիկների հետ, հետեւաբար իրանց չորս զէնքերը ձգելով անձնատուր են լինում։

Քուրդ ու պարսիկ իշխոյն թափվում են խեղճերի վրա եւ տեղն ու տեղը յոչնչում՝ գլուխները մարմիններից բաժանելով։

Սալմասի սարդարասի Զաղրամէլ-Մելքի-այա բարբարոս եւ սրտաճմլիկ արարքը խորին տպաւորութիւն է գործում Սալմասցի հայերի վրա, նոյնիսկ մատնողների վրա, որովհեւ, ինչպէս յետոյ յայտնել է, նրանք չէին կարծել որ այդ խեղճերին կը կոտորեն։ Այս առաջին անգամն է որ հայերի վրա Պարսկաստանում՝ այսպիսի մի խիստ պատիժ է գործադրվում։

Արդ 10 կարիճ հայերից միայն մէկն է ազատվել, պաշարված տեղից զէնքը ձեռին փախչելով։ Մի հայ, ոմանք ասորի են ասում, քաղաք են բերել իբր նրանց վէլէար (առաջնորդ)։

Առաջնորդ Սրբազանը այս անսպասելի անիրաւ գործի մասին բողոքեց ռուսաց կոնսուլին եւ Սատրազամին։

Սակայն ի՞նչ օգուտ բողոքից քանի որ այդ կարիճ հայերի գլուխները տեղը չեն գալու եւ նրանց մայրերի արտասուքները չեն ցամաքելու...։

Եթէ կայ մի պարագայ, որ այս տխուր եւ աղէկտուր դէպքի ճնշող տպաւորութիւնը մեղմացնում է եւ մի քիչ էլ այրած սրտերը զովացնում՝ այն էլ այդ կարիճներին կառավարութեան մատնող ընտանիքի տեղն ու տեղը սպանվելն է։ Այդ ընտանիքը լաղկացած էր երեք հոգուց, այր ու կին եւ մի աղջիկ։ Ովքեր են սպանել դրանց, դեռ յայտնի չէ...

Պարսկաստանի հայերի խերն էլ տեսէք, քիչ է մնացել որ Տաճկաստան դառնայ, եւ նրանից էլ վատ։

ՄԻՐՋԱ.

Բարիզ, 8 Նոյեմ.

Բարիզի Ուսանողական Միութիւնը չանալով ջնջել այն տխուր տպաւորութիւնը, զոր թողուց, արգելք հանդիսանալու ճիգեր ընելով Աբովեանի և Արծրունու յիշատակին համար Հայ Ուս. Ակումբին կատարած հոգեհանգստին, իր կարգին, ամսոյս 5ին, Սալ Քրէթիէնի սրբարանին մէջ, դրական և երաժշտական երեկոյթ մը կազմակերպեց Աբովեանի մահուան յիսնամեակին առթիւ։

Երեկոյթը կը գտնուէր քաղաքիս Հոգեւոր Հովիւ Տ. Պարոնեան վարդապետի նախագահութեան՝ և Տ. Տ. Իսկէնտէրի ու Յովակիմեանի հովանաւորութեան ներքեւ։ Հայերու ընտիր բազմութիւն մը ներկայ էր։ Փութանք

WIEN 1/12 1898

ըսել թէ երեկոյթը շատ լաւ անցաւ։

Պ. Զօպանեան ընտիր բանախօսութեամբ մը, որ ժամէ մը աւելի երկար տեւեց, նկարագրեց «Վէրք Հայաստանի»ի հեղինակին կեանքը։ Նմանապէս եռանդագին ծափեր խլեցին Պ. Պ. Սվաճեան, Եղիազարօֆ և օր. Պապայեան։

Այս քաղցր տպաւորութեան ներքեւ է որ հանդիսականները պիտի մեկնէին, եթէ ծրագրի յանկարծական յեղաշրջումով մը ամենէն վերջը թողուած չըլլար «Հայ ուսանողութիւնը» ատենաբանութիւնը, զոր արտասանեց Պ. Միհրդատեանց։ Եւ յաւելի է ըսել, ամբողջ հանդիսին՝ այս ատենախօսութիւնը արտասանելու աւիթ մը ունենալու համար կազմակերպուած ըլլալը բացորոշ յայտնուեցաւ։ Պ. Միհրդատեանց, յանուն Բարիզի հայ ուսանողութեան՝ անոր գործունէութեան առաջնորդ ներկայացուց «Անահիտ»ը և «Վաղուան Ձայն»ը որոնք որոշ կուսակցութեան մը պատկանող հրատարակութիւններն են։ Աւելորդ է ըսել թէ ուսանողութեան այն մասը, որ իր կոչումին աւելի լայն ընբռնում մը ունենալով, չը հանդուրժեր որ ուսանողութեան պէս ընդհանուր հիմնարկութիւն մը կուսակցական գործիք դառնայ, խստիւ բողոքեց Պ. Ատենաբանին այս՝ և ուրիշ անպատեհ յայտարարութեանց դէմ։ Պ. Միհրդատեանց իր երկու սիրական թերթերուն հրապարակային ոգեքլամը սպրդեցնելէ ետքը, շարունակեց իր ներբողականը ուսանողներու նկատմամբ, և յորդորեց զանոնք որ յառաջդիմեն իրենց ընտրած ճիւղերուն մէջ։ Միայն մոռցաւ խրատել որ Ակումբին դէմ հանուած հալածանքը դադրեցնեն, ինչ որ աւելի պատուաբեր բան մը եղած կրլլար։ Հետաքրքրական է նաև դիտնալ թէ ինչո՞ւ «Անահիտ» և «Լ'Առմէնի» չի հաճեցան Ուսանողաց Ակումբին հասատատումը ծանուցանել։

Ե. Տ.

Սիլիստրի, 13 Նոյեմ.

Ամսոյս 8ին, կիւրակի օր, երրորդ անգամ ըլլալով, կազմակերպուեցաւ տեղւոյս լսարանը։ Գործադիր ժողովը թէեւ քանի մը անձերու դիմելով խնդրած էր որ պարբերաբար խօսին, բայց ասոնք այլ եւ այլ պատճառներով առ այժմ ձեռնպահ մնալով, գըլխաւոր խօսողն եղաւ դարձեալ Պ. Ղ. Նահապետեան։ Ներկայ էին տեղացի բանասէրներ եւ մեր Հայաստանցի պանդուխտ եղբայրները։ Պ. Նահապետեանի բանախօսութեան նիւթն էր՝ Տարօն եւ իր նշանաւոր վանքերու, վայրերու ու դիւղերու՝ ինչպէս նաեւ Խոյթ, Սասուն եւ Շատախ գաւառներու հայրենագիտական, բնական, պատմական, աշխարհագրական եւ ազգագրական նկարագրութիւնը։ Ցետոյ խօսեցաւ Պ. Ռատանիկեան՝ հայրենագիտական եւ ազգագրական հմտութեանց օգտակարութեան վրայ։ Երկու ատենախօսներն ալ շատ ընտիր տպաւորութիւն մը թողուցին։

Ընթերցարանի Վարչութիւնը կը պատրաստուի ներկայացում մը տալ, եւ մեծ յոյս ունինք թէ հասարակութեան աջակցութիւնովը արդիւնաւոր պիտի ըլլայ։ Ներկայացուելիք խաղն է «Մեհրուժան Արծրունի»։

Վաղինակ

ԲՈՒԼԳԱՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

—

Անցեալ շաբաթ օր բուլգարները երաժշտա-դրական երեկոյթ տուին, որին մասնակցում էր և երիտասարդ դաշնակահար, Պ. Ամիրխանեանցը։

Ի հարկ է հայ հասարակութիւնը բացակայում էր։ Ցաւալի է ճշմարիտ, Վառնայի հայերը, ինչպէս մեծ մասամբ ամեն տեղի հայերը, չեն սիրում յաճախել այնպիսի տեղեր, ուր մեր կոպիտ ու աղտոտ զգացմունքները կարող են մաքրվել, նրբանալ և բարձրանալ։ Մենք սիրում ենք չալղը և չալղիճիներ, բարձր երաժշտութիւնը մեղ պէտք չէ։ Նրանք բաւականութիւն չեն տալիս մեր թրքական ճաշակին։

Հիմա խօսենք երեկոյթի մասին։ Պ. Դրագուլէվ կարդաց Բալկանեան Թերակղզու անցեալի ներկայի և ապագայի մասին։ Թէեւ ազգասիրական ոգով, բայց ոչ այնքան լուրջ բան։

Մի պարոն էլ կարդաց Պարիզի նախկին ոստիկանապետ Գօրանի յիշատակարանից, Ֆրանսիոյ բարձրաստիճան սպաների աղտոտութիւնը ցոյց տալու նպատակով։ Յառաջաբանը լաւ էր, իսկ մնացածը ձանձրալի։ Մանաւանդ կարդացողը ցած ձայնով էր կարդում։ Երկու պատանիներ արտասանեցին ոտանաւորներ, բաւական ազդու և աջող կերպով։

Ցաւելով պէտք է յայտնեմ, որ երաժշտութեան մէջ համբակ եմ և քննադատ լինել չեմ կարող, բայց յայտնում եմ իմ անձնական տպաւորութիւնների արդիւնքը։

Պ. Պետրաս, ջութակի վրա նուագեց Բօդից «Կոնսէրտ», մի երկար բան, կարծես առանց զգացմունքի, լոկ իբր արհեստաւոր։

«Լէժէնդը» Վէս..... և միւս կտորները աջող էին մանաւանդ Վագների մէջ, ուր նրան ընկերակցում էր Պ. Խրիստով, ջութակի վրա, իսկ Պ. Ամիրխանեան դաշնակի։

Երգչուհի տիկին Ալֆանս ազդու էր միայն «Սմուր տը Դիսիէդ»ի և «Լէժէնդ Վալաքայի» մէջ։ Մի երկու տեղ միայն չը յարմարվեց իրան ընկերակցող ջութակահարների և դաշնակահարի հետ։ Պ. Խրիստով զգացմունքով նուագեց Վագների կտորը դուէտ, Պետրասի հետ։

Օր. Ստ..... միայն երգեց մի ժողովրդական երգ, ձայնը լաւ էր, գուցէ և զգացմունք կար։ բայց դէմքը շարժուն չէր։ յուզիչ երգի նշանները չէին երեւում։ Թէեւ երգի բառերը յուզիչ էին, գուցէ նրա համար որ առաջին անգամ էր բեմ դուրս եկել։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼՐՏԵՍԻ ՈՐԴԻՆ

—

Վերեւ բարձրանալով նախասենակից անցան մի փոքրիկ սենեակ, որը թէ սեղանատան եւ թէ ընդունարանի տեղ էր ծառայում։ Կահ կարասին կիսաեւրոպական եւ կէս ասիական էր։ պատերը զարդարված էին հայ փաշաների եւ եպիսկոպոսների պատկերներով։ մի քանի հատ էլ գունաւոր սիրահարական պատկերներ կային։ Պատուհանների տակ ձգված էր տոշաման, սպիտակ ծածկոցով, եւ պատին կրթնած երկար բարձերով։ Դիմացը գտնվում էր մի քառակուսի սեղան, ասեղնագործ ծածկոցով, վրան հայելի եւ մի վազա։ յատակը ծածկված էր պարսկական ոչ թանկագին զորգերով։ կային եւ մի քանի եւրոպական աթոռներ։ Սենեակի մի անկիւնում դրված էր բաւական գեղեցիկ պղինձէ կրակարանը, որի վրա կային երկու պղնձէ կլայեկած ամաններ, բան եւրեւոյթին կերակուր էր, որ վրան դրված էր տաք մնալու համար։ Սենեակ մտնող օտարականը, կարող էր ասել՝ որ այս տան տէրը բարեկեցիկ է։ բայց երբէք աղքատ։ Ներս մտան թէ չէ, Ստեփան էֆէնդին լամպան դրեց սեղանի վրա։ գնաց ընկաւ տոշաման վրա եւ ճակատը շփելով ասեց։

—Էհ, զուշիկս, շուտ, սեղանը պատրաստէ։ չան պէս անութի եմ, ամբողջ օրը քալեցի, երկու ոսկին այնքան դիւրութեամբ չի շահվիր։ Սկիւտարէն Ղզլնճուգ, հոն տեղէն Գալաթայ, Բերա, Բանկալթի, Զապտիէ գաբու, վերջն ալ հոս։

—Էհ, ի՞նչ ըրիր, գտար, Կոմիսէրին ըսած մարդը, ասոր նորէն եկաւ, քեզմէն գժգոհ էր... հաղիւ հանդարտեցուցի...

—Կոմիսէ՛րը։ Նորէն եկաւ, ինչ գործ ունի հոս, ինչո՞ւ իմ քովս չի գար...

Փերուզը չը լսելու աւեց եւ գնաց կերակուրների մօտ։ բացեց, համբ տեսաւ, նորից դարձաւ եւ ժպտալով—ամուսնուն մօտեցաւ ասելով—ըսէ նայիմ։ գտար, հա, աղւորիկս։

—Ախ, քո այդ ժպիտդ, Փէրուզ, ամեն բան մոռցնել կուտայ։ Այո, գտայ, այդ Վահէ կոչված սրիկային եւ այսօր բռնել տուի, մատնեցի կը հասկնաս, հայ յեղափոխականի մը թուրքին յանձնեցի։ այս խօսքերը արտասանեց բաւական բարձր ձայնով եւ դեռ ուզում էր շարունակել, բայց Փէրուզը չընչաց։

—Սուս, կամաց, Լեւոնիկը նոր պառկեցաւ։ կարելի է որ քնած ալ չէ։ տղան ատ բաներէն կը հասկնայ, ասոր դպրոցէն շատ ուրախ տուն եկաւ։ երբ պատճառը հարցուցի, ըսաւ որ, յեղափոխականները վատ լրտես մը սպաներ են։ Լրտես մը որ շատ հայ երիտասարդներ մատներ է։ Երբ ըսի, քիզի ինչ, քու ինչ պէտքդ է։ ան պատասխանեց։

—Ինչպէս թէ ինծի ինչ, ես հայ չեմ, ազգս չեմ սիրեր։ եթէ ատանկ լրտես մը իմ ձեռքս ալ իյնար ես ալ կսպաննէի։

Եւ այս խօսքերը ըսած միջոցին՝ յօնքերը անանկ ժողվեց, աչքերը անանկ փայլեցան որ կրակ կը ցատէր։ բուռցքներն ալ անանկ սեղմեց, որ ես ալ վախցայ եւ ինծի թվեցաւ թէ տղան բան մը հասկցեր է, մանաւանդ ասոր տեսաւ կոմիսարին մեր անէն ելլալը...

Ստեփան էֆէնդին գոյնը գցեց եւ գրեթէ գոռալով ասեց։

—Ինչ, իմ տղաս ատանկ բաներ կը խօսի, հայ կը սիրէ եւ հայ լրտես պիտի սպաննէ։ ես անոր իմ ձեռքովս կը խեղդեմ։ օ՛ֆ...

—Սուս քա, խենդեցար ի՞նչ է։ խեղճ տղեկը դիւաղդար պիտի ընես, սուս, ասոր քէֆ ունինք։ չէ որ ֆիստանցուիս ստակը տուիր։ սուս աղւորիկս, եկուր, համբուրեմ քեզի, կը խաղաղիս։

Այս ասելով Փէրուզը կրկին օձի պէս փաթաթվեց Ստեփանի վզովը։ այս անգամ նա կատարեալ օձ էր, գալարվում էր։ Ստեփանը երբ զգաց կնոջ տաք շնչառութիւնը, զգաց նրա փախուկ մարմնի հպումը, ամեն բան մոռացաւ՝ իրան կորցրեց եւ անձնատուր եղաւ այդ ճկուն, հրապուրիչ եւ թունաւոր օձին...

Իսկ խեղճ Լեւոնիկը, մի տասնեօթ տարեկան դպրոցական պատանի, որ արդէն գաղափար ունէր հայ յեղափոխութեան եւ լրտեսների մասին, որովհետեւ դպրոցի մեծ աշակերտների հետ կապ ունէր, նրանց հետեւում էր եւ հասկանում էր որ լրտեսին պէտք է սպանել։ այսօր սպանված լրտեսի մասին շատ վատ բաներ լսելով, չափազանց յուզված էր եւ իր անկողնում պառկած մտածում էր այն հայ կարիքի մասին, որ գնտակահար էր արել վատ հային։ Նա հիանում էր լրտեսին սպանողի հերոսութեան վրա՝ եւ մտածում—ախ ես երբ պիտի բոլորովին մեծնամ...

Ցանկարծ հայրը ներս մտաւ եւ սկսեց մօր հետ խօսել։ Լեւոնը ամեն բան լսեց եւ հասկացաւ։ պաղ ու տաք քրտինք փոխնի փոխ, սկսեցին թրջել նրա մարմինը։ շնչառութիւնը թուլացաւ, մազերը ցցվեցին։ ինքն էլ չէր հասկանում թէ ինչ է պատահում իրան հետ։ Կաշկանդված եւ անկողնում մխված ի պէս էր։ մէկ ուզեց դուրս վազել եւ ծնողների երեսին չպրտել։ դուք դաւաճաններ էք։ ես ձեր զաւակը չեմ, կամ մի դանակ վերցնել եւ թէ հօր ու մօր սրտերը պատռել։ Բայց յանկարծ սկսեց հեծկլտալ, ցնցվելով վերմակը գլխին քաշեց եւ խեղդված ձայնով շշնջաց։

—Հայրս եւ խորթ մայրս դաւաճաններ են, իսկ ես դաւաճանի զաւակ։ մի ենթակայ հայ ժողովրդի անէծքին եւ արհամարանքին։ Ո՜հ, ինչ սոսկալի վիճակ, չեմ կրնար հայրասպան մը ըլլալ։ փախիմ այս տանէն։ վաղը, նոյն իսկ այս գիշեր։ թող հայրս հայու արեան գին ոսկիներով ֆիստանցու առնէ իր նոր կնոջ համար։ իսկ ես կուսակցներուն շարքը կը մրցնամ։ Օր մը, հաքը, եթէ ձեռքս չը դողայ, հայրս ալ կսպանեմ եւ պատիւս կը մաքրեմ...

ՎԵՐՋ

Վարդ.

Պ. Ամիրխանեանց դաշնակի վրա նագեց, առանձին մի կտոր Շուքերտից, Շոպէնի «Բալադը» իր հիւսած բապսոդիները։ Ընկերակցեց տիկին Ալիշանօի երգին և դուէտ ջութակներին։ Այս անգամ Պ. Ամիրխանեան աւելի համարձակ էր վարվում դաշնակի հետ։ ազդու և զգայուն կերպով նագեց, շատ լաւ ընկերակցեց տիկին Ալիշանօին, Պ. Պետրասին և Պ. Խրիսաովին, վագներից վերցրած կտորի մէջ։

Իսկ իր հիւսած բապսոդիները ցոյց տուին որ յարգելի դաշնակահարը ընդունակ է ըմբռնելու ժողովրդի զգացմունքները և բաւական ճիշդ ու զգայուն կերպով արտայայտելու։

Խորհուրդ կը տայինք Պ. Ամիրխանեանցին մշակել մեր ժողովրդական եղանակները։ բացի դրանից վատ չէր լինի և նոյն իսկ օտարների համար տուած կոնցէրտների մէջ դնէր և մեր յայտնի ու պրդէն բաւական մշակուած եղանակներից։

Ճիշդ է դեղարուեստի և արուեստի համար հայրենիք չէ կայ։ բայց ամէն մի դեղարուեստասէր պէտք է չանայ իր ժողովրդի գեղեցիկն էլ զարգացնել և աշխատել որ նա էլ պատուաւոր տեղ բռնի ընդհանուր գեղարուեստի մէջ։

ՎԱՐՕ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՂԱՆՕ-ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

—

Ալպանօ Մակեդոնական յեղափոխական դաշնակցութիւնը, որ ապստամբութիւն մը կը պատրաստէ Ալպանիոյ և Մակեդոնիոյ մէջ, հետեւեալ յայտարարութիւնը հրապարակ հանած է։

«Այն յայտարարութեան նպատակն է պարզել եւրոպական հասարակութեան առջեւ ճշմարիտ բնութիւնը, Ալպանօ-Մակեդոնական խնդրին, որ արդէն Եւրոպայի ուշադրութիւնը հրաւիրած է և սահմանուած կը թուի անձկութեան մօտաւոր պատճառներ առաջ բերելու։

Մեր դաշնակցութիւնը մեծ պարտականութիւն մը կատարած կը նկատէ, Ալպանօ-Մակեդոնական խնդիրը իր հողին վրայ դնելով, և ցոյց տալով միակ լուծումը զոր հնարաւոր կը կարծենք, յօդուտ այն ժողովուրդներուն որոնց դատը կը ներկայացնենք։

Մեր գործը բնականաբար դաղտնի մնացած է երկարատեւ ժամանակամիջոց մը, և տակաւին ժամանակ մը ալ այդպէս պիտի մնայ։ Բայց, թէեւ նեղուած և հալածուած, դարձեալ գեղեցիկ արդիւնքներ ձեռք բերած ենք։ Եւ որովհետեւ պատճառներ ունինք կարծելու թէ մեր շարժման պատմութեան մէջ տագնապալի վայրկեան մը կը մօտենայ, ինքզինքնիս պարտաւոր կը համարինք մեր մօտաւոր գործունէութեան ծրագիրը յայտարարելու։

Ուստի մեր նպատակն է.

1. Ալպանիոյ և Մակեդոնիոյ անկախութիւնը ձեռք բերել.

2. Դաշնակցական Պետութիւն մը ստեղծել, որ ինքնին կառավարուելով, այդ երկիրներուն մէջ ապրող բոլոր ազգերը միացընէ, առանց կրօնքի, ցեղի և լեզուի խարութեան։

3. Խստիւ հակառակիլ այն բոլոր ծրագրերուն որոնք կրնան Ալպանօ-Մակեդոնական անկախութեան խոչնդոտ կանգնիլ.

4. Մերժել մը չամտութիւնը բոլոր մեծ կամ փոքր տէրութեանց, որոնք, համակրութեան պատրուակին ներքեւ, չանան իրենց սեփական և անձնասիրական նպատակները իրականացնել։

5. Դաշնակցութիւնը վերջին ծայր ջանասակար կը համարի երկու ազգերուն իրարմէ բաժնուիլը, և կը դատապարտէ Ալպանիան Մակեդոնիայէն զատելու ամէն թելադրութիւն կամ առաջարկ։

Դաշնակցութիւնը յաջողած ըլլալով Ալպանիացի և Մակեդոնացի ժողովուրդներուն ջանքերը միացնել մօտալուտ և գերագոյն կռուին համար, ամէն տեղ իրեն համար գաղտնի պատուիրակներ և կուսակիցներ ապահոված է Սըլտրդ Փէօշ էն սկսեալ մինչեւ Ալպանիոյ և Մակեդոնիոյ խոնարհագոյն հիւղակը։

Մեր դաշնակցութիւնը յարմար բոպէի կսպասէ միայն՝ ընդհանուր ապստամբութեան նշանը տալու համար։ Իր աշակցութիւնը երբէք չպիտի նուիրէ գործունէութեան ուրիշ ծրագրի մը, գիտնալով թէ Ալպանացիները և Մակեդոնացիները մի միայն Դաշնակցութեան կոչը իմանալով է որ պիտի ապստամբին։

Երկու երկիրները ընդունած և վաւերացուցած են մեր ծրագիրը և կազմ ու պատրաստ են անոր սկզբունքներուն համաձայն շարժելու»։

Լոնտոն, 10 Նոյեմբեր

ՆԱՄԱԿԱՑՈՒԹ

—

Ս. Պ. Բարիզ. — Ձեզ ալ կը կրկնենք թէ անուան մը միայն սկզբնատառերը չեն բաւեր ո եւ է նամակի վաւերականութիւն տալու. եւ մեկէ աւելի պարագաներու մէջ նոյն իսկ ամբողջ անունը տնբաւական է, երբ անիկա անձանօթ է խմբագրութեան։

Բ. Աղեքսանդրիա. — Ղրկուած է ժամանակին. փնտռեցէք։

Ա. Բ. Մէճիտիէ. — «Անահիտ»ի բաժանորդագրուելու համար դիմեցէք Ռուսչուք՝ Տիար Գառնիկ Տէօքմէճեանի։

Տ. Ֆ. Ֆօքչան. — Ստացանք։

Ի. Մ. Պուրսէյ. — Ձեր յանձնարարած տոմսերը կարժեն 12 ֆրանք։

Նահապետ. Սիլիսարէ. — Ղրկեցէք։

——)·(——

ՔՐՈՆԻԿ

—)·(—

Հաճընի մանարանին հայ գործաւորուհիները, Ուէնամինատբրի դուքսին ձեռքով, որ Անգլիոյ հայկական նպաստամատոյց ընկերութեան Գործ. ժողովոյ նախագահն է, նրբահիւս գորգ մը նուիրեր են Անգլիոյ թագուհուոյն։ Ն. Վեհափառութիւնը իր անձնական քարտուղարին միջոցաւ նամակ մը ղրկելով դուքին, գոհունակութիւն յայտներ է հայկական նպաստամատոյց յանձնաժողովին՝ Հաճընի և ուրիշ վայրերու տառապեալներուն համար օգտաւէտ և շահաբեր աշխատանք մը հաստատած ըլլալուն համար։

—Վիճակացոյցէ մը կը տեղեկացուի թէ մինչեւ 1897 մարտ, Կ. Պոլսոյ հայկական կեդր. նպաստամատոյց յանձնաժողովը 224 հազար անգլ. ոսկի նպաստ ընդունած է։ Այս գումարէն 80 հազարը Անգլիա տուած է. 128 հազարը Ամերիկա և Եւրոպա և 16 հազարը հայերը։

—Լոնտոնի մէջ հրատարակուած է «Սուլթանին հրամանը» անունով անգլիերէն ստուար վէպ մը հայկական կեանքէ։ Հեղինակը անգլիացի է։

—«Տէյլի Թէլէկրաֆ» անուանակոչելի աղբիւրէ առնելով կը հրատարակէ այն լուրը թէ Վիլհէլմ կայսրը Պոլսոյ դեսպաններուն հետ լսուած առեն ըսած է. «Առաջին այցելութենէս ի վեր այս ինը տարուան միջոցին, Թուրքիոյ կործանումը արագօրէն յառաջդիմեր է»։

—Մարաշի և ուրիշ տեղերու հայերը, նկատելով որ միսիոնարներու քով գտնուող իրենց որբերը ո՛չ եկեղեցի կը ղրկուին և ոչ ալ դէթ հայ աշխարհական կրօնուսոյցի ձեռքով ազդ. եկեղեցիին վրայ ո և իցէ բան կը սորվին, ձեռնարկեր են ետուղել Միսիոնարներու քով գտնուած հայ որբիկները։

— Ֆիլիպէէն՝ հովուական ծանօթ քարոզի մը առթիւ, քանի մը սաստիկ թղթակցութիւններ կլլեցնել տուած են Պոլսոյ թերթերուն։

—Սոֆիա բնակող Պուլկարական անկախութեան նախկին կամաւորները, անցեալ երկուշաբթի ժողով գումարելով, Կրէտէի Գործադիր Յանձնաժողովին նախագահ՝ Պ. Սթաքիանքիսի խնդակցական հեռագիր մը ուղղեր են, շնորհաւորելով կրէտական ազգը իր ձեռք ձգած անկախութեան համար, և շնորհակալութիւն յայտնելով յոյն ժողովրդին՝ 1877-78ի ազատարար պատերազմէն առաջ, պուլկարներու տառապանքի օրերուն մէջ, ցոյց տուած համակրութեան համար։

——)·(——

ՍՏԻՊՈՂԱԲԱՐ

կը խնդրենք մեր բոլոր այն բաժանորդներէն որոնք տակաւին Բ. վճարմանան չեն վճարած,

ինչպէս նաեւ անոնցմէ՝ որոնք սիրիզբէն ի վեր «Շարժումը» կանոնաւորապէս ստանալով հանդերձ, մինչեւ այսօր սանդիմ մը իսկ չեն ղրկած խմբագրութեան,

որ՝ այդ վճարումները «անմիջապէս» ընելու ժամանակը հասած համարեն, խորհելով թէ թերթ մը հրապարակ հանելը պայն կարդալու չափ դիւրին գործ չէ, այլ նիւթական, մտաւորական և ֆիզիքական ահագին զոհողութիւններու կը կարօտի։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԷՊՔԵՐ

ԿՐԷՏԷԷՆ ԼՈՒՐԵՐ

Անկասկած դարուս ամենէն զաւեշտական հեռագիրն է այն զոր Սուլթանը ճարահատած՝ ուղարկած է Զարին, խնդրելով որ իր խաթերը համար, Եորկիոս իշխանը Կրէտէ ղրկելու անհաճոյ մտադրութենէն վազ գայ։

Եորկիոս իշխանը Կրէտէի կառավարիչ կարգելու ծրագիրը, կըսէ Սուլթանը, ամենացաւալի տպաւորութիւնը առաջ բերած է թէ իմ և թէ ժողովրդիս վրայ։ Իմ եւ Վեհափառութեանդ յարաբերութիւնները, ինչպէս նաեւ այն ապահովութիւնները զոր տուած ես թրքա-յունական պատերազմէն առաջ և անկէց ետքը, և իմ շահերս ու իրաւունքներս պաշտպանելու տուած խոստումդ ապահով երաշխիք են թէ թանկագին աջակցութիւնդ պիտի նուիրես մեկուսացնելու համար այնպիսի դրութիւն մը, որ անընդունելի է թէ ինծի և թէ իմ հպատակներուս համար։

Զարը երախտապարտ պիտի կացուցանէ Սուլթանը եթէ Եորկիոս իշխանին, ո՛և է անուան տակ Կրէտէ երթալը արգիլէ, և ասիկա՝ Զարին կողմէն բարեացակամութեան նոր ապացոյց մը պիտի ըլլայ։

Սուլթանը նպաստաւոր պատասխան մը կը սպասէ Զարէն։

* * *

Թող ան սպասելու ըլլայ, ասդին իրերը իրենց բնական ճամբան կրնթանան հակայաքայլ։ Աթէնքի եւրոպական դեսպանները ամսոյս 14ին հանդիսաւորապէս Թունասանի Եորկիոս Թագաւորին ներկայացան, և ծանուցին իր որդւոյն Կրէտէի Քօմիսէր անուանումը։ Թագաւորը իր հաւանութիւնը տուաւ իշխանին, և իր կողմէ երախտագիտութիւն յայտնեց Եւրոպայի։ Եորկիոս իշխանն ալ յայտարարեց թէ իր ձեռքէն եկածը պիտի ընէ, կղզին խաղաղեցնելու համար։

Կըսուի թէ առ այժմ իշխանին պաշտօնավարութիւնը ժամանակաւոր է, երեք տարուան հա-

մար. բայց միշտ վերընտրելի։ Ամէն երեք ամիս՝ Ֆրանսերէն լեզուաւ տեղեկագիր մը պիտի պատրաստէ կղզիին կացութեան վերայ, և զայն պետութեանց պիտի յանձնէ։

* * *

Այժմ Կրէտէի մէջ դրօշակի հետաքրքրական խնդիր մը կայ։ Երբոր պետութեանց կողմէ կղզիին ինքնավարութիւնը յայտարարուեցաւ, կրէտացիները ուզելով զգացնել թէ իրենց ճշմարիտ իղձը մայր-հայրենիքի հետ միանալը պիտի ըլլայ միշտ, որոշեցին ինչպէս սեւ խորքով դրօշակ մը ունենալ, մէջտեղը փոքրիկ քառակուսիով մը որ ճիշդ ու ճիշդ յունական դրօշը կը ներկայացնէ։ Հիմա այդ դրօշն է որ ամէն տեղ կը ծփայ Կրէտէի մէջ։ Ծովակալները թէև մինչեւ հիմա ձայն չէին հանած՝ բայց անոնց երիցագոյնը՝ Բօթիէ, ծանուցած է թէ դրօշակի խնդիրը իշխանին հասնելէն ետքը պիտի լուծուի։

—Կրէտացի ժողովուրդը որոշած է ամէն տարի տօնել իր թրքական տիրապետութենէն ազատման տարեդարձը, հանդէսով մը որ պիտի կոչուի Էլէվթերիա (ի պատիւ ազատութեան)։ Այս հանդէսը առաջին անգամ պիտի տօնուի, երբ Եոկիոս իշխանը ոտք կոխէ կրէտական հողին վերայ։

—Աթէնքէ «Թայմզիս» կը հեռագրեն թէ Թրքական Մահիկը պիտի շարունակէ մնալ Քանիայի և Քանիայի մէջ։

—Մօտերս ռուս զօրավար մը Կրէտէ պիտի երթայ, Զարին կոչմէ նամակ մը յանձնելու Եոկիոս իշխանին։

—Կը կարծուի թէ հանրածանօթ Վասոս զօրավարն ալ Կրէտէ երթայ իշխանին հետ։

—Միջազգային դատարանը սկսաւ զբաղիլ Թուրքոճրագործներու դատով։ Երկու իսլամներ հրացանի բռնուեցան։

—Մասնաւոր նամակէ մը կը տեղեկանանք թէ Կրէտէ երթալ ուզող օտարականները առ այժմ Վալօի և Բիրէսի մէջ կսպասեն, մինչեւ որ գործերը աւելի կարգադրուելով, կղզոյն մուտքը ամենուն արտօնուի։

ԴԵՍՊԱՆԱԽՈՐՀՈՒՐԴ

Հականիշխանական դեսպանախորհուրդը բացուեցաւ ամսոյս 13ին, Հռովմի Բօրսինի պալատին մէջ, ծովա՛լ Քանօվարօի նախագահութեան ներքեւ։ Ծովակալը յանուն Իտալիոյ թագաւորին ողջունեց պատուիրակները, և յոյս յայտնեց թէ ժողովը իր ձեռնարկին մէջ պիտի յաջողի, քանի որ անոր բոլոր անդամները համաձայն են տակաւին վրայ թէ ընկերութեան կը սպառնայ մեծ վտանգ մը, զոր պէտք է մեկուսացնել։ Յետոյ, ծովակալը դեսպանախորհուրդին մնայուն նախագահ ընտրուեցաւ։ Կը կարծուի թէ դեսպանախորհուրդին աշխատութիւնները Մընունդէն առաջ պիտի աւարտին։ Հետաքրքրական է գիտնալ թէ որոնք պիտի ըլլան անիշխանականութիւնը չնչելու համար ձեռք առնուելիք միջոցները։ Եթէ ընկերութեան տատապանքները ոչ շափով գոնացում տան ուղին բռնեն՝ լաւ. իսկ եթէ ոստիկանական խստութիւններու վրայ դրած են յոյսերնին, այժմէն կարելի է ձեռնարկը վրիպած համարել, և դարձեալ սպասել այն ցաւալի և ողբերգական սպանութիւններուն, որոնք պարբերաբար պորթկալով, աշխարհը կը ցնցեն։

Իտալական ոստիկանութիւնը ծայրայեղ միջոցներ ձեռք առած է, որպէս զի պատուիրակները ո՛և է փորձանքի չհանդիպին։

ԹՈՒՐՔԻԱ

Դ. Պոլսէն կը հեռագրեն թէ նախաշարներէն շատերը Սուլթանին մատուցեր են հաւաքական տեղեկագիր մը, որ, կայսրութեան իառնաշփոթ վիճակը պարզելով, հարկ եղած բարենորոգումները մատնանիշ կընէ։

Բոլոր նախարարները համաձայն են այս կէտին վրայ, բայց Սուլթանը ամէն բարենորոգումի հակառակ ըլլալով, նախարարներու բռնած դիրքէն սաստիկ բարկացած է. այնպէս որ մօտերս նախարարութեան կազմութեան մէջ փոփոխութիւններու կը սպասուի։

«Կազէթ սը Ֆրանքֆորթ» կիմանայ թէ Սաատէտտին և Շաքիր փաշաները դարձեալ Մակեդոնիոյ մէջ երեւակայական բարենորոգումներ մտցնելու համար, յատուկ պաշտօնով այդ կողմերը պիտի դրկուին։ Եւ սակայն այս փաշաներու անցեալը, ինչպէս նաեւ իրենց արուած հրահանգներուն կեղծ ու պատիր բնութիւնը աչքի առջեւ բերելով, անտարակուսելի է թէ այս նոր առաքելութիւնն ալ արդիւնք մը չպիտի տայ Մակեդոնիոյ քրիստոնեաներուն համար։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լեթէրհաղի մէկէն ի մէկ Լոնտոնէն հեռացաւ, իմացած ըլլալով թէ Ֆրանսայի հարցաքննիչ դատաւոր Պ. Պէրթիլիւս, անոր Ֆրանսայի կառավարութեան յանձնումը պիտի խնդրէ իաբեբայական գործի մը համար որ երեւան ելած է։

—Ֆրանսական մամլոյ մեծամասնութիւնը զայրացած է գընդապետ Բիդարի դէմ հանուած հալածանքին համար։ «Ֆիկարօ» կը հաւատայ թէ ոչ մէկ ձայն չէ հնչեր գնդապետին պատերազմական ատենին յանձնուելու Զիւլֆինաէ զօրավարին և Պ. Ֆըրէսինեի ձեռքով։

Կըսուի թէ Պ. Քավէնեաք մըտայրին խանդարման նշաններ ցոյց կուտայ, Գերագոյն Ատենին առջեւ իր տուած հարցաքննութենէն ի վեր։ Ցաճախակի բանատպուշակութեանց ենթարկուած և հալածանքի մենամոլութենէն բռնուած է։

—Մանօթ թրքասէր անգլիացի երեսփոխան Սըր Աշմէթ Պարթլէթ Իզմիրի ելեքտրականութեան վերաբերեալ ձեռնարկներու մենաշնորհը ստացեր է Սուլթանէն։

—Պօղոս փաշա Նուպար, հրաժարած է եգիպտական երկաթուղեաց վարչապետութեան պաշտօնէն։ Այս հրաժարման պատճառ ցուցուցած է իր հօր՝ Նուպար փաշայի առողջական վիճակը. որ վերջերս աւելի մտահոգիչ հանգամանք մը առած է։

—Անգլիական թերթերը կը հաւատան թէ սպանիական կառավարութիւնը վերջնական հրահանգը ուներ է հաշուեցեան յանձնաժողովին սպանիական պատուիրակութեան նախագահ՝ Պ. Մանթէրօ Բիոսի, ստորագրելու դաշնագիրը, ի հարկէ, Փիլիպպեանները խնդիրը կարգադրելով Ամերիկայի փափագներուն համաձայն։

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՈՒԲԱՆՈՅՆԵՐ

ԷՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ

Կ. Պոլսոյ ռուսական դեսպանը Պատրիարքարանի հետ համաձայնելով, որոշած է Հայաստանի այլ և այլկողմերը որբանոցներ բանալ թրքական վայրագութիւններու հետեւանքով երեսի վրայ մնացած հաղարաւոր հայ որբերը պատսպարելու համար։

Առաջին որբանոցը մօտերս պիտի բացուի Բալուի մէջ, և պիտէ կրէ հետեւեալ անունը. «Հայ-ռուսական որբանոց, հիմնուած Մոսկվայի՝ Եղբայրական օգնութիւն Թուրքիայի ՀԱՅԵՐՈՒՆ՝ ժողովածուի խմբագրութեան հովանաւորութեան ներքեւ»։ Որբանոցի տեղ ընտրուած է Ս. Աստուածածնի Քաղցրահայեաց վանքը։

Ցայտնի է թէ «Եղբայրական օգնութիւն» ժողովածուի խմբագրութիւնը արդէն 13,140 ռուբլի դրկած է հայ տառապեալներուն, ռուս դեսպանին միջոցաւ, և իր հաստատները օրէ օր կաւելնան։

ԱԶԴ

Պատ. Հայկ Եարամեանի՝ Ուրբաթ օր ժամը եօթնուկէսին՝ «Բարոյական փիլիսոփայութեան» վրայ ընելիք դասախօսութեան նիւթը պիտի ըլլայ «Բնական Օրէնք»։ Ամենայն սիրով կը հրաւիրուին Հայ ուսանողներ քանի որ դասախօսութիւնը միայն Հայերէն լեզուաւ կը դրուի։

——).(——

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐԺՈՒՄԻ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հաստէտոմս, նամակագլուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահագդ, ինչպէս նաև պրոշիւռներ։

Գիներն յոյժ դիւրամատչելի։ Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։

ՊՕՐՍԱ

Վառնա 18 Նոյեմբեր

ՊՈՒՂՏԱՑ

Վակօն, լիպրա 55—58, հէքթօլ. 9—9.50 ֆրանք

Արապա, լիպրա 55—60 հէքթօլ. 9—12 ֆրանք

ԱՐԲԱ

Լիպրա 42—50 հէքթօլ. 5.80—6.20 ֆրանք

ՄԻՍԻՐ

Վակօն, 55—57 լիպրա, 5.40—5.60

Առապա, 55—60 լիպրա, 5.70—6

Կիւնկէ 8—10 վակօն, 25—30 առապա կէլմէքտէ տիր։

ԵՈՒԼԱՑ

Կիւնտէ 4—5 արապա կէլմէքտէ տիր. 4.60—5 ֆրանք

ՉԱՐՐ

Կիւնտէ 5—6 արապա կէլմէքտէ տիր. 58—60 լիպրա, 5.20—5.80 ֆրանք

ՖԱՍՈՒԼԵԱ

Կիւնտէ 8—10 առապա կէլմէքտէ տիր 100 օգգասը 18—22 ֆր. մաղա կէօրէ։

Առապա մուամէլէսի՝ Նաբօլէոն 21 ֆրանք հիսապը իլէ տիր.

Կիւնտէ 15—20 վակօն, 100—120 արապա պուզտայ, 10—15 արապա արբա կէլմէքտէ տիր։

ՎԱՐԴՕ

ԵՐԿՈՒ ՍԷՐ

(ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ)

)(Գին 1 Ֆրանգ)(

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ՝ Ֆ. Անտոն Կոչի մօտ, Ռուսչուք՝ Հայկ Մալխեանի սրճարանը, Սոֆիա՝ Տ. Մուշեղ Արծրունիի քով։

Մօտերս մամուլին կը յանձնի նոյն հեղինակին «Բռնութեան զոհերը»։

«ՇԱՐԺՈՒՄ»

Վառնայի մէջ կը վաճառուի Մուսալլա, Խահմիզ Կէօզիպէօյլուքեանի խանութը, եւ Ապուբրահամ մզկիթին դէմը հայկական գրատունը։ Ա. Զարպհանէլեանի քով։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ՍԱՊԱՇ-ԳԻՒԼԵԱՆ

ԵՒՐՈՊԱՑԻ ԺԱՂԱՓԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ ՑԵՏՈՑ

Գին 1 ՖՐԱՆԳ

Կը վաճառուի Շարժումի խմբագրատունը։

Отговорникъ: А. СУКЯСОВЪ.

Печатница „Взаимность“ Варна.